

Ներածություն

Մույն գործիքների հավաքածուի նպատակն է ներկայացնել մարդու իրավունքների վրա ազդեցության գնահատումը Հարավային Կովկասում՝ նախատեսված քաղաքացիական հասարակության տարբեր կազմակերպությունների համար՝ նպատակ ունենալով ուսուցանել իրավունքների վրա ազդեցության գնահատման, առավելությունների և ձևերի մասին: Բացի տեսական մասից, կփորձենք ընդգծել համայնքի վրա հիմնված մարդու իրավունքների վրա ազդեցության գնահատումը, որը կարող է ծառայել որպես հնարավոր ուղղորդում Հարավային Կովկասի երկրներում իրականացնելու համար:

Ի՞նչ է Մարդու իրավունքների վրա ազդեցության գնահատումը

Մարդու իրավունքների վրա ազդեցության գնահատումը (ՄԻԱԳ) քաղաքականությունների, օրենսդրության, ծրագրերի և նախագծերի ուսումնասիրության գործիք է՝ նրանց ազդեցությունը մարդու իրավունքների վրա նույնականացնելու և չափելու նպատակով: Այն ապահովում է համապարփակ արձագանք առ այն, թե ինչպես է նախագիծը, քաղաքականությունը կամ միջամտությունը ազդում մարդու իրավունքների վրա: ՄԻԱԳ-ի հիմնական նպատակն է օգնել կանխել գործողության վնասակար ազդեցությունը՝ մինչև ժամանակ առավելագույնի հասցնելով դրական ազդեցությունը:

Շատ վճռորոշ է մարդու իրավունքների մասին քննարկումները դարձնել գործող իրավական և քաղաքական մի շարք լայն համատեքստերում մարդու իրավունքների համակարգված մեթոդաբանության շրջանակի միջոցով, այսինքն՝ որոշակիացնել մարդու իրավունքների շուրջ գործողության ազդեցությունը ոլորտների լայն շրջանակում: Իրականում, ՄԻԱԳ-ը վերլուծում է մարդու իրավունքների լայն շրջանակի վրա թողնվող ազդեցությունները, ներառյալ՝ քաղաքական իրավունքները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքները:

ՄԻԱԳ-երը կարող են օժանդակել հանրային քաղաքականությունների ձևավորման գործընթացին՝ ուշադրությունը հրավիրելով տվյալ քաղաքականությամբ մարդու իրավունքների անտեսված ազդեցությունների վրա կամ պրոյեկտելով մարդու

իրավունքները որոշումների կայացման գործընթացում: Այս կարող է ներազդել քաղաքականության այլընտրանքային տարբերակների վրա, նպաստել հանրային մասնակցությանը հանրային քաղաքականությունների ձևավորման և մշտադիտարկման գործընթացում և բարձրացնել հաշվետվողականությունը այդ քաղաքականությունների վերաբերյալ, կրթական քաղաքականության նախաձեռնություններ՝ նպատակ ունենալով հավասարեցնել հասանելիությունը գենդերային և/կամ սոցիալ-տնտեսական դասերի նպատակով):

ՄԻԱԳ-երի մեծամասնությունը, որոնք կիրառվում են քաղաքականությունների կամ նախագծերի նախապատրաստման և/կամ իրականացման ընթացքում, ուղղակիորեն չեն առնչվում մարդու իրավունքների հետ, ինչպես օրինակ՝ առևտրի աճը, զարգացման աջակցությունը կամ պատվարի կառուցումը, սակայն կարող են ոչ միտումնավոր բացասական ազդեցություն թողնել մարդու իրավունքների վրա: Հետևաբար, ՄԻԱԳ-ը կարող է օգտակար լինել այն դեպքերում, երբ առաջարկվող քաղաքականության կամ նախագծի մարդու իրավունքների ներիմաստը հստակ չէ սկզբում և կբարձրացնի հաշվետվողականությունը մարդու իրավունքների վրա ազդեցություն գործելու համար:

ՄԻԱԳ-ը խթանում է հաշվետվողականությունը, քանի որ դրանք հիմնված են մարդու իրավունքների իրավական պարտավորությունների վրա, որոնք իրավական պարտադիր ուժ ունեցող շրջանակներ են պետությունների համար: Արդյունքում, նախագիծը քննարկվում է «իրավատերերի» և «պարտականություն ունեցողների» տեսանկյունից, որը մեծացնում է ՄԻԱԳ-ի նշանակալիությունը: Այն առաջարկում է գործողության ազդեցությունների լիովին համապարփակ գնահատում մեծ թվով իրավունքների տեսանկյունից՝ շեշտադրելով իրավունքների փոխկապակցվածությունը հարակից մտահոգությունների և պարտականությունների հետ:

Ո՞րն է նորությունը՝ ՄԻԱԳ-ի լրացուցիչ առավելությունները

ՄԻԱԳ-երը մշակվել են՝ ելնելով այլ տեսակի ազդեցությունների գնահատումներից, ինչպես օրինակ՝ շրջակա միջավայրի ազդեցության գնահատումները (ՇՄԱԳ-եր) և սոցիալական ազդեցության գնահատումներ (ՍԱԳ-եր), կազմում են փորձակված պրակտիկայի մի մասը և պարբերաբար անցկացվում են շատ երկրներում առաջարկված քաղաքականությունների, ծրագրերի և նախագծերի գնահատման նպատակով: Չնայած ՇՄԱԳ-երը և ՍԱԳ-երը սովորաբար նախնական

գնահատումներ են, ՄԻԱԳ-երի մեծամասնությունը մինչ այժմ եղել են փաստացի գնահատում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ՄԻԱԳ-երը հիմնված են պարտադիր իրավական ուժ ունեցող միջազգային մարդու իրավունքների օրենսդրության նորմատիվային շրջանակների վրա, որոնք կառավարությունները աշխարհով մեկ կամավորության սկզբունքով պարտավորվել են հարգել միջազգային դաշնագրերի վավերացման միջոցով: Մարդու իրավունքների շրջանակը պահանջում է չափել, թե որքանով է տվյալ քաղաքականությունը կամ նախագիծը համապատասխանում մարդու իրավունքներին և՛ էության, և՛ գործընթացի առումով:

Միջազգային մարդու իրավունքների օրենքի շրջանակի կիրառումը որպես գնահատման օբյեկտիվ չափանիշ օժանդակում է և՛ բարոյական լեգիտիմության, և՛ իրավական հաշվետվողականության ընդհանուր իրականացմանը, քանի որ մարդու իրավունքները սոցիալական արդարության հիմնական լեզուն են: ՄԻԱԳ-երը հաղորդում են հանձնարարականներին եզակի կարևորություն և ուժ ու կարող են սահմանափակել այն, թե որքանով են փոխզիջումներն ընդունելի:

ՄԻԱԳ-ը վերաբերվում է մարդու իրավունքներին, այսինքն՝ իրավական պարտադիր ուժ ունեցող շրջանակ է: Մարդու իրավունքները հիմնվում են նորմատիվային ամուր փոխհամաձայնության վրա և այդ սկզբունքները համընդհանուր կերպով համաձայնեցված են բազմաթիվ միջազգային համաձայնագրերի շնորհիվ: Համեմատելով ներկայիս գոյություն ունեցող մեղմ իրավունքի գործիքների հետ՝ մարդու իրավունքների ուժը և համընդհանրությունը ՄԻԱԳ-ի հիմնական առավելություններից մեկն են:

Հիմնարար մարդու իրավունքների սկզբունքները, ինչպիսիք են՝ հավասարությունը և խտրականության չենթարկելը պահանջում են տվյալների տարանջատում ըստ գենդերի, ազգային պատկանելության և տարածաշրջանի, որպեսզի լիովին գնահատվի որոշակի քաղաքականության ազդեցությունը կոնկրետ խոցելի անձանց վրա: Այս կիզակետը մարդու իրավունքների վրա հիմնված տեսակետին բնորոշ հատկանիշ է, որը սովորաբար հարիր չէ դիրքորոշումներին: Հետևաբար, ՄԻԱԳ-ը թույլ է տալիս առավել խոր վերլուծություն անցկացնել՝ համապատասխանեցնելով կոնկրետ թիրախ խմբերին:

Մարդու իրավունքների տեսակետը թույլ է տալիս առավել համապարփակ գնահատում իրականացնել՝ ներառելով այն իրավունքները, որոնք միգրացե անտեսվեն ազդեցությունների այլ տեսակի գնահատման ընթացքում (օրինակ՝ ազատ արտահայտվելու իրավունքը): ՄԻԱԳ-ը սկսում է լայնորեն գնահատել միջազգայնորեն ընդունված մարդու իրավունքների ամբողջական շարքը՝ փոքրացնելով դրանց թիվը մանրագնին ուսումնասիրության ընթացքում: Ի տարբերություն ազդեցությունների գնահատման այլ կոնկրետ մեթոդաբանությունների (սոցիալական և/կամ շրջակա միջավայրի ազդեցության գնահատումներ, գենդերային ազդեցության գնահատում) ՄԻԱԳ-ը չի սահմանափակվում մարդու իրավունքների՝ նախապես որոշված ցանկով, այլ որդեգրել է առավել բաց և ճկուն մեթոդաբանություն:

ՄԻԱԳ-ը նախաձեռնելիս՝ շեշտը դրվում է իրավատերերի հզորացման և սեփականության իրավունքի վրա, որոնք ընկալվում են ոչ որպես պասիվ սուբյեկտներ, այլ խրախուսվում են լիովին մասնակցել գնահատման գործընթացում: Ի տարբերություն սոցիալական ազդեցության գնահատման, ՄԻԱԳ-ը կենտրոնանում է ուժ չունեցողների ձայների վրա. միայն իշխանության տեսակետների վրա հիմնվելը բավարար չէ մարդու իրավունքների շրջանակում:

ՄԻԱԳ-ը աջակցում է մարդու իրավունքների դերակատարների մեծ թվի ներգրավմանը, որոնք միգրացե ներառված չլինեն այլ տեսակի ազդեցությունների գնահատման գործընթացում: ՄԻԱԳ-ը ընդգրկում է մարդու իրավունքների տրանսազգային ցանցեր, որոնք ներառում են քաղաքացիական հասարակության ակտիվիստներ, միջկառավարական մարմիններ, դատական, գրեթե-դատական և փորձագիտական մեխանիզմներ, որոնք միջոցներ են տրամադրում հարցը առավել լայն լսարանին հասցնելու համար՝ այսպիսով ուժեղացնելով ժողովրդավարական հաշվետվողականությունը և ներառականությունը:

ՄԻԱԳ-երը համընդհանուր են և համապարփակ, որոնք սովորաբար քննարկում են տնտեսական, սոցիալական և մշակութային ասպեկտները, ինչպես նաև քաղաքացիական և քաղաքական ասպեկտները, քանի որ դրանք հիմնված են իրավական շրջանակի վրա, որը ներառում է այս բոլոր իրավունքները՝ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային: Մարդու իրավունքները շրջանակը դիտարկում է այս իրավունքները որպես փոխկապակցված իրավունքները, որոնց արդյունքում հզորանում է միջսեկտորիալ

մոտեցումը գնահատման գործընթացում, ինչպես նաև նպաստում է միջազգային մարդու իրավունքների օրենսդրության կապակցվածությանը:

Ո՞ր մարդու իրավունքներն են գնահատվում

Այն հարցի պատասխանը, թե որ մարդու իրավունքներն են ենթադրաբար ազդեցության ենթարկվում, ակնհայտորեն կախված է գնահատման ենթակա քաղաքականության բնույթից: Առևտրային համաձայնագրերի ազդեցությունը տվյալ երկրի մարդու իրավունքների իրավիճակի վրա մեծ հավանականությամբ տարբերվում են խաղաղապահ ծրագրի ազդեցությունից: Մինչ այժմ ՄԻԱԳ-ի վերանայումը ցույց է տվել, որ տնտեսական, սոցիալական և մշակութային (ՏՄՄ) իրավունքներն հատուկ ուշադրության են արժանանում, երբ քաղաքացիական և քաղաքական (ՔՔ) իրավունքներն առավել քիչ դերակատարություն ունեն: Ի թիվս այլոց, ՏՄՄ իրավունքները ընդգրկում են առողջության, ջրի, կրթության, սննդի և աշխատանքի իրավունքը: Չնայած այս բոլոր իրավունքները մանրամասնորեն նախատեսված են Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային համաձայնագրում, պետությունները հաճախ վերաբերվում է այդ իրավունքներին որպես երկրորդական պատականություններ՝ համեմատած ՔՔ իրավունքների հետ:

ՄԻԱԳ-երի մեծամասնությունը, որոնք իրականացվել են՝ շեշտը դնելով քաղաքականությունների կամ նախագծերի վրա, որոնց հիմնական նպատակն ուղղակիորեն չի առնչվում մարդու իրավունքների հետ, ինչպես օրինակ այն քաղաքականությունները կամ նախագծերը, որոնք օգտագործվել են առևտրի հոսքը մեծացնելու, զարգացման օժանդակություն տրամադրելու կամ մեծ ենթակառուցվածքներ կառուցելու նպատակով, սակայն կարող են ոչ միտումնավոր ազդեցություններ ունենալ մարդու իրավունքների վրա, մասնավորապես իրականացման փուլում: Այս շեշտադրումը զարմանալի չէ, քանի որ ՄԻԱԳ-երը հատկապես օգտակար են այն դեպքերում, երբ առաջարկվող քաղաքականության կամ նախագծի մարդու իրավունքների ենթատեքստը ակնհայտ չէ նախագծման փուլում:

Տարբեր ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ էներգետիկայի զարգացման և ազատ առևտրին և այլնին ուղղված քաղաքականությունները կարող են ազդեցություն թողնել մարդու իրավունքների իրավիճակի վրա, օրինակ՝ առողջության իրավունքը շատ հաճախ վտանգվում է մտավոր սեփականության մասին դրույթներով, որոնք

ներառված են Մտավոր սեփականության իրավունքների առևտրային ասպեկտների համաձայնագրերում, իսկ ջրի և կրթության իրավունքը կարող է վտանգվել Ծառայությունների վաճառքի մասին ընդհանուր համաձայնագրով, սննդի իրավունքը կարող է վտանգվել գյուղատնտեսության մասին համաձայնագրով, իսկ աշխատանքի իրավունքը՝ առևտրի ազատականացմամբ, ընդհանուր առմամբ:

Աղյուսակ 1. Հավանաբար ազդված մարդու իրավունքներ (օրինակներ)

Աշխատանք	Բարեկեցություն /սոցիալական միջավայր/	Քաղաքական իրավունք
Աշխատանքի իրավունք	Կյանքի իրավունք	Ազատության իրավունք
Բարեկեցիկ աշխատանքի իրավունք	Առողջության իրավունք	Կամայական ձերբակալությունից զերծ մնալու ազատություն
Արդար վարձատրություն իրավունք	Համարժեք ջրամատակարարման իրավունք	Նվաստացուցիչ վերաբերմունքից և կտտանքներից զերծ մնալու ազատություն
Զշահագործվելու ազատություն	Մաքուր շրջակա միջավայր ունենալու ազատություն	Մտքի ազատություն
Երեխայի աշխատանք Ցանկը շարունակվում է	Համարժեք կենսամակարդակ ունենալու իրավունք	Դավանանքի ազատություն
Հարկադիր աշխատանք չկատարելու	Սննդի իրավունք	Ազատ արտահայտվելու իրավունք

ազատություն		
Հավասար վարձատրություն հավասար աշխատանքի դիմաց	Կրթության իրավունքի	Հավաքի իրավունք
	Կեցության իրավունք	Անձի անձեռնմխելիության իրավունք
Արհմիության անդամ լինելու իրավունք	Համայնքի մշակութային կյանքին մասնակցելու իրավունք	Միավորումների ազատություն
Ցույցերի/գործադուլի իրավունք	Բնակության ազատություն	Խտրականության չդրսևորում

ՄԻԱԳ-երի տեսակները

Ըստ հետազոտողների, գոյություն չունի ՄԻԱԳ-ի որևէ տեսակ: Առաջացել են մեծ թվով գնահատումներ՝ ձևավորված մի շարք գործոններով, ինչպես օրինակ՝ գնահատման ենթակա միջոցի տեսակը, գնահատման բնույթը, ժամկետները, գնահատման ենթակա տվյալները և ով է նախաձեռնում գնահատումը:

Գնահատման նպատակից ելնելով՝ ՄԻԱԳ-ը կարող է գործածվել գնահատելու օրենսդրության, հանրային քաղաքականության, բիզնես նախագծի կամ ծրագրի ազդեցությունը: Գնահատումը կարող է ուսումնասիրել միայն գործարկված մարդու իրավունքների պարտականությունների որոշակի տեսակը կամ պոտենցիալ ազդեցությունը կոնկրետ խմբի վրա (օրինակ՝ երեխաներ, կանայք, էթնիկ փոքրամասնություններ) կամ սահմանված հիմնախնդիրը (շրջակա միջավայրը, առողջությունը, կրթությունը), կամ տալ ծրագրի մարդու իրավունքների ազդեցությունների ընդհանուր պատկերը: Կարևոր է նաև ընդունել, որ գնահատման գործընթացը և իր մեթոդաբանությունը տարբերվում է՝ կախված գնահատման ենթակա միջոցի բնույթից և գործարկված մարդու իրավունքների պարտականությունների բնույթից:

Ցանկացած ազդեցության գնահատման էական տարրը ժամանակի կարգավորումն է՝ գնահատման ենթակա քաղաքականության, ծրագրի կամ նախագծի համեմատությամբ: ՄԻԱԳ-երը կարող են նախաձեռնվել մինչև ազդեցությունը կամ

ազդեցությունից հետո: Ազդեցության նախնական գնահատումները տեղի են ունենում նախքան միջամտությունների տեղի ունենալը և նպատակ ունեն չափել նման միջամտությունների պոտենցիալ ապագա ազդեցությունները մարդու իրավունքների, շրջակա միջավայրի, սոցիալական հարցերի կամ առողջության վրա (կախված նրանից, թե արդյոք ՄԻԱԳ է, ՇՄԱԳ, ՍԱԳ կամ առողջության ազդեցության գնահատում): Փաստացի ՄԻԱԳ-երը կարող են ուժեղացնել քաղաքականության մշակումը՝ հնարավորություն տալով քաղաքականություն մշակողներին կամ բիզնես ձեռնարկություններին ադապտացնել կամ փոփոխել քաղաքականությունը, նախագիծը կամ ծրագիրը մարդու իրավունքների խախտումները կանխելու նպատակով: Դրանք պետք է իրականացվեն քաղաքականությունների մշակման գործընթացի հնարավորինս վաղ փուլում, որպեսզի ստացված տվյալները և հանձնարարականները հնարավոր լինի ներառել քաղաքականության կամ միջամտության ձևավորման փուլում:

Փաստացի ազդեցության գնահատումները չափում են քաղաքականությունների, ծրագրերի կամ նախագծերի իրականացման իրական ազդեցությունը, երբ ներկայիս իրավիճակը համեմատվում է նախքան միջամտությանը կամ ընդունված քաղաքականությանը առկա իրավիճակի հետ: Փաստացի ՄԻԱԳ-երը կարող են լինել առանձին վարժության տեսքով կամ կարող են կազմել փաստացի ՄԻԱԳ գնահատման փուլի մի մասը:

Սովորաբար ՇՄԱԳ-երը և ՍԱԳ-երը նախնական գնահատումներ են: Իրականում, նախնական գնահատման բաղադրիչը ներառված է ազդեցությունների գնահատման շատ սահմաններում որպես էական տարր: Դրան հակառակ, ՄԻԱԳ-երի մեծամասնությունը փաստացի գնահատումներ են եղել: Գործոններից մեկը, որը կարող է ազդել գնահատման ժամանակային կարգավորման վրա, դա իրականացնող դերակատարի նույնականացումն է: ՄԻԱԳ-երի ճնշող մեծամասնությունը իրականացվում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից (ՔՀԿ), որոնք մինչ այժմ եղել են փաստացի գնահատումներ, որը կարող է այն փաստի հետևանքը լինել, որ ՔՀԿ-ները բախվում են դժվարությունների քաղաքականության կամ նախագծի մասին կառավարությունից ժամանակին և բազմակողմանի տեղեկատվություն ստանալու հարցում նախքան քաղաքականության կամ նախագծի հաստատումը: Իր հերթին, փաստացի ՄԻԱԳ իրականացնելու նրանց կարողությունը կարող է զգալիորեն սահմանափակվել: ՔՀԿ-ներին առավել հարմար է անցկացնել գործող կամ նախկին քաղաքականությունների կամ նախագծերի գնահատումները, քանի որ գնահատումներ նման են մարդու

իրավունքների մշտադիտարկմանը և հետազոտությանը, որ մարդու իրավունքները պաշտպանող ՀԿ-ները տասնյակ տարիներ իրականացնում են:

Մարդու իրավունքների ազդեցության գնահատման (ՄԻԱԳ) փուլերը

Ինչպես շատ հեղինակներն են ընդգծում, ի համեմատության գնահատման այլ գործիքների, ՄԻԱԳ-ը հարաբերականորեն նոր գործիք է. այն կիրառվել է տարբեր դերակատարների կողմից տարբեր նպատակներով և ՄԻԱԳ-երի անցկացման մեթոդաբանությունները դեռևս մշակվում են: Դեռևս գոյություն չունի ՄԻԱԳ-ի անցկացման հաստատված միօրինակ ՄԻԱԳ, այնուամենայնիվ, ՄԻԱԳ-երի գործիքների հավաքածուն վերանայելով հնարավոր է նույնականացնել հիմնական փուլերը (կամ քայլերը) ՄԻԱԳ-ում: Ստորև հակիրճ ներկայացված են այս մեթոդաբանական փուլերը.

1. ՆԱԽՆԱԿԱՆ ԳՀԱՀԱՏՈՒՄ

Սա ՄԻԱԳ-ի առաջին փուլն է, որի ընթացքում գնահատողը իրականացնում է ծրագրի, քաղաքականության, նախագծի, իրավական ակտի կամ ցանկացած այլ տեսակի միջամտության նախնական գնահատում (այսուհետ՝ միջամտություն) որոշելու համար, թե արդյոք հարմար է կամ անհրաժեշտ է անցկացնել ՄԻԱԳ:

Սովորաբար բավարար ռեսուրսներ չկան մարդու իրավունքների ազդեցությունները գնահատելու համար ցանկացած անհատական միջամտության համար: Հետևաբար՝ այս փուլը մասնավորապես կարևոր է որոշելու, թե արդյոք միջամտությունը հավանական ազդեցություն կունենա մարդու իրավունքներից օգտվելու վրա և հետևաբար պահանջում է ՄԻԱԳ, եթե այո, ինչքան մանրամասն է հարկավոր: Նախնական գնահատումը նաև կարևոր է, երբ գնահատման ազդեցության կենտրոնը հստակ չէ:

2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Այս փուլում նախագծվում է տեխնիկական առաջադրանքը, այսինքն՝ գնահատման զարգացման քարտեզը, որը սովորաբար ներառում է այն տեղեկատվության սահմանումը, որը պետք է հավաքվի գնահատման ընթացքում: Այս փուլում իրականացվում է մարդու իրավունքների ներկայիս իրավիճակի նախնական հիմնական գնահատում և ուրվագծվում են ընտրանքները և

Սցենարները:

Ազդեցության գնահատումն ուսումնասիրող հետազոտողները և պրակտիկ գնահատողները առաջարկում են¹, որ նախնական գնահատման փուլում մասնավորապես ուշադրություն պետք է դարձնել.

- Գնահատման ենթական միջամտության ըմբռնմանը, որը ներառում է միջամտության տեսակի, վայրի և փուլի նույնականացումը, տեղում գործող համապատասխան շրջանակների, քաղաքականությունների, ընթացակարգերի և/կամ չափանիշների և ազդեցության տարածքի նույնականացումը,
- Մարդու իրավունքների ենթատեքստի ըմբռնմանը, որը պետք է ներառի ֆորմալ ենթատեքստի վերլուծությունը, այսինքն՝ կիրառելի ազգային կանոնակարգերը, քաղաքականությունները և որոշումները, ինչպես նաև մարդու իրավունքների իրական օգտագործման տվյալները և տվյալներ վերլուծության եզրակացությունները,
- Շահառուների նույնակացմանը և քարտեզագրմանը. կարևոր է նույնականացնել ոչ միայն շահառուների տեսակները, այլ նաև նրանց ազդեցության հզորությունը և այն, թե միջամտությունը ինչ հավանական ազդեցություն կթողնի նրանց վրա:

Այս տեսակի ազդեցությունների գնահատման դեպքում, ՄԻԱԳ-երի տեխնիկական առաջադրանքը պետք է բավական ճկուն լինի որպեսզի թույլ տա փոփոխություններ հետազոտության շրջանակներում, քանի որ մարդու իրավունքների անկանխատեսելի ազդեցություններ կարող են առաջանալ գնահատման ընթացքում կամ նախկինում ընտրված թեմաները կարող են անհամապատասխան թվալ: Ավելին, գործունեության շրջանակի սահմանումը սովորաբար վերլուծական հետազոտություն է, սակայն միջամտության տեսակից ելնելով կարող է ներառել հետազոտություն տեղում մարդու իրավունքների համատեքստը առավել լավ ըմբռնելու համար:

3. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ

Այս փուլը ներառում է տվյալների հավաքում միջամտության պոտենցիալ կամ իրական ազդեցությունների մասին (կախված այն փաստից, թե ՄԻԱԳ-ը նախնական է, թե փաստացի)¹ օգտագործելով տարբեր աղբյուրներ և գործիքներ:

¹ Մարդու իրավունքների դանիական ինստիտուտ /The Danish Institute for Human Rights/, 2016

Այս փուլը նախատեսված է առավել խորը ուսումնասիրելու և առավել հասկանալու այն հիմնախնդիրները, որոնք նույնականացված են գործունեության շրջանակի սահմանման փուլում հիմնականում տեղում անցկացվող տվյալների հավաքման և շահառուների ներգրավման միջոցով: Փաստերի հավաքումը կարող է ներառել քաղաքական, սոցիալ-տնտեսական, բնապահպանական և այլ տեսակի տվյալների հավաքումը՝ հասկանալու մարդու իրավունքների կիրառման կարգավիճակը և սահմանելու այն ազդեցությունները, որոնք կարող են տեղի ունենալ միջամտության արդյունքում (կամ արդեն իսկ տեղի են ունեցել՝ փաստացի ՄԻԱԳ-ի դեպքում):

ՄԻԱԳ պրակտիկ փորձագետները առաջարկում են գործածել մարդու իրավունքների՝ թիրախավորված քանակական և որակական չափանիշներ, որոնք կարող են օգտակար լինել տվյալների հավաքման, հիմնական իրավիճակի վերլուծության, տարբեր ընտրանքների ազդեցությունների չափման և համեմատման համար, ինչպես նաև ՄԻԱԳ-ի առավել ուշ փուլերում, օրինակ՝ մեղմացման միջոցառումները սահմանելիս և միջամտության իրականացումը մշտադիտարկելիս²: Հարցեր պարունակող ստուգման թերթիկները մարդու իրավունքների պայմանների մասին կարող են օգտագործվել միևնույն նպատակներով³:

4. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Եզրակացություններ կազմելով վաղ փուլերում հավաքած տեղեկատվության հիման վրա՝ այս փուլի նպատակ է իրականում գնահատել, վերլուծել միջամտության մարդու իրավունքների իրական (նախնական ՄԻԱԳ) կամ հավանական (փաստացի ՄԻԱԳ) ազդեցությունները, հստակ արտահայտել ՄԻԱԳ-ի արդյունքները և առաջարկել միջոցներ մարդու իրավունքների բացասական ազդեցությունները կանխելու կամ մեղմացնելու նպատակով և ուժեղացնել դրական ազդեցությունները:

ՄԻԱԳ վերլուծաբանները և պրակտիկ փորձագետները առանձնացնում են երեք կարևոր կետ ազդեցության վերլուծության ընթացքում քննարկելու համար: Առաջին կետն այն է, որ ազդեցությունները պետք է գնահատվեն ի հակադրություն մարդու իրավունքների համապատասխան նորմերի և չափանիշների, օրինակ, եթե առնչվում են մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու իրավական

² Մարդու իրավունքների դանիական ինստիտուտ /The Danish Institute for Human Rights/, 2016

³ Սկանդինավյան հավատարմագրային կառավարման հիմնադրամ /Nordic Trust Fund/, 2013

պարտականությունների հետ, որը ՄԻԱԳ-ի էական և բնորոշ գիծ է (ի համեմատության ազդեցությունների գնահատման այլ տեսակների):

Այս փուլում երկրորդ կարևոր հարցն այն է, որ վերլուծությունը պետք է հասցեագրի միջամտության և՛ առարկայական, և՛ ընթացակարգային կողմերը՝ ի նկատի ունենալով, որ ՄԻԱԳ-ը չպետք է ուսումնասիրի միայն միջամտության մարդու իրավունքների ազդեցությունները, բայց արդյոք բուն միջամտության ձևակերպումը, հաստատումը և իրականացումը անցկացվել են մարդու իրավունքների սկզբունքների և չափանիշների համապատասխան:


Ի վերջո, քանի որ վերլուծությունը չափում է տարբեր ազդեցությունների հավանականությունը՝ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը ազդեցությունների տեսակների առումով.

- Գործարար և մարդու իրավունքների համատեքստում՝ ՄԱԿ-ի գործարար և մարդու իրավունքների ուղղորդող սկզբունքները առաջարկում են քննարկել «Բացասական մարդու իրավունքների ազդեցություններն են այն ազդեցությունները, որ բիզնես ձեռնարկությունը կարող է պատճառել կամ օժանդակել իր գործողությունների միջոցով, կամ որոնք կարող են ուղղակիորեն կապված լինել ձեռնարկության գործառնությունների, ապրանքների կամ ծառայությունների հետ իր գործարար հարաբերությունների միջոցով», այսինքն այն ազդեցությունները, որոնք բիզնեսը թողնում է, օժանդակում կամ ուղղակիորեն կապված է բիզնեսի հետ:
- Տարբեր միջամտությունները կամ միջամտությունների տարբեր փուլերը կարող են օժանդակել առկա, պլանավորված կամ ապագա միջամտությունների գնալով աճող ազդեցություններին՝ հանգեցնելով ազդեցությունների կուտակմանը, հետևանք, կարևոր է, որ ՄԻԱԳ-ը ներառի այդպիսի գումարային ազդեցությունների քննարկում (գումարային ազդեցությունները այն ազդեցություններն են, որոնց պատճառը անցած, ընթացիկ և խելամտության սահմաններում կանխատեսելի ապագա միջամտություններն են):
- Միջամտության դրական արդյունքները կարող են նկատվել, սակայն, մարդու իրավունքների դրական ազդեցության նույնականացումը ՄԻԱԳ-ի առաջնային նպատակը չէ: ՄԻԱԳ-ը պետք է առաջնահերթորեն կենտրոնանա բացասական ազդեցությունների նույնականացման և հասցեագրման վրա, և ոչ թե դրական

ներդրումների վրա, որոնք չեն առնչվում այդ ազդեցությունների հասցեագրմանը: Դրական ներդրումները (ինչպես օրինակ՝ աշխատատեղերի ստեղծումը, կառավարական եկամուտները և այլն) կարող են դիտարկվել առանձին և չպետք է գործածվեն միջամտությունը օրինականացնելու համար:

- Մարդու բոլոր իրավունքները հավասար են և մարդու իրավունքների առաջնահերթություն չկա, սակայն, ՄԻԱԳ-ի դեպքում կարևոր է հաստատել ազդեցության խստությունը, որի նպատակն է որոշել առաջնահերթությունների հերթականությունը, որտեղ պետք է հասցեագրվեն նույնականացված ազդեցությունները: ՄԱԿ-ի գործարար և մարդու իրավունքների ուղղորդող սկզբունքները պահանջում է նախևառաջ փնտրել, կանխել և մեղմացնել մարդու իրավունքների այն բացասական ազդեցությունները, որոնք ամենախիստն են և որտեղ ուշացած արձագանքը դրանք կդարձնի անուղղելի:

Ազդեցությունների տարբեր տեսակների նույնականացմանը և վերլուծությանը հաջորդում է այն միջոցառումների նախագծումը, որոնք պետք է հասցեագրեն այս ազդեցություններին: Մարդու իրավունքների վրա ազդեցությունների առնչությամբ գործողությունները մշակելիս՝ պետք է մշակել այսպես կոչված մեղմացման



Մեղմացման...

հիերարխիա, որը հիմնականում ազդեցությունների գնահատման այլ տեսակներում կիրառվող մեղմացման հիերարխիան է (օրինակ՝ ՇՄԱԳ-ը): Այս մոտեցման դեպքում առաջնահերթություն է տրվում ազդեցությունից խուսափելուն և ոչ թե կրճատմանը, կրճատմանը և ոչ թե վերականգմանը, ու վերականգմանը և ոչ թե ազդեցությունների փոխհատուցմանը, այսինքն այս մոտեցումը առաջարկում է գերադասելի մոտեցում՝ մեղմացման ամենաօգտակար մեթոդից մինչև առավել

քիչ օգտակար մեթոդ (տես ստորև՝ նկար...): Այնուամենայնիվ, ՄԻԱԳ վերլուծաբանները նախագուշացնում են, որ մարդու իրավունքների համատեքստում

մեղմացման հիերարխիան պետք է կիրառվի զգուշությամբ և պետք է հաշվի առնել հետևյալ երեք ասպեկտները⁴.

(ա) մեղմացման միջոցառումները պետք է համատեղելի լինել միջազգային մարդու իրավունքների չափանիշների և սկզբունքների հետ,

(բ) Շտկումը պետք է քննարկվի, բայց այն չպետք է շփոթել փոխհատուցման հետ. Փոխհատուցումը պետք է դիտարկվի միայն որպես վերջին հանգրվան,

(գ) Մարդու իրավունքների վրա ազդեցությունները կարող են փոխհատուցվել նույն կերպ, ինչպես բնապահպանական ազդեցությունները՝ այն իմաստով, որ անհամատասխան է փոխհատուցել կոնկրետ ազդեցությունները մարդու իրավունքների վրա, որոնք ունեն դրական օժանդակություն այլ տեղ:

5. ՀԱՇՎԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Վերոնշյալ քայլերը ավարտելուց հետո հրապարակվում է հաշվետվություն՝ շեշտադրելով ՄԻԱԳ գործընթացը, գնահատման արդյունքները և ազդեցությունների մեղմացման հանձնարարականները: Հաշվետվությունում նաև ներառվում է ապագա մշտադիտարկման և գնահատման պլան:

Գոյություն ունեն տարբեր տեսակետներ (և հետևաբար, պրակտիկաներ) այն կապակցությամբ, թե ինչ պետք է հրապարակվի գնահատման արդյունքում, ինչպես պնդում են ՄԻԱԳ վերլուծաբանները: Ընդհանուր առմամբ, քանի որ թափանցիկությունը և հաշվետվողականություն ՄԻԱԳ-ի կարևորագույն ասպեկտներն են, «ամբողջական» ՄԻԱԳ հաշվետվության հրապարակումը խրախուսվում և համարվում է լավ պրակտիկա: Սակայն, խելամիտ է նաև ուսումնասիրել ՄԻԱԳ-ի արդյունքների ամբողջական բացահայտման այլընտրանքային տարբերակները (օրինակ՝ ամփոփիչ հաշվետվության հրապարակում), երբ ամբողջական բացահայտումը կարող է վնասակար լինել իրավատերերի համար (օրինակ՝ զգայուն տեղեկատվության բացահայտման պատճառով) կամ կարող է լինել «հակաարդյունավետ գործընկերներին կամ կառավարությանը՝ մարդու իրավունքների գործընթացում ընգրկելու համար»⁵: Վերլուծաբանները նաև առանձնացնում են կոնկրետ ոլորտները, որոնք պետք է

⁴ Մարդու իրավունքների դանիական ինստիտուտ /The Danish Institute for Human Rights/, 2016

⁵ Մարդու իրավունքների դանիական ինստիտուտ /The Danish Institute for Human Rights/, 2016

ուշադիր քննարկվեն նախքան ՄԻԱԳ հաշվետվության հասանելիությունը ապահովելը և հաշվետվության և հաղորդակցության նշանակալից դարձնելու համար, որոնք են՝ լեզուն, թիրախ խմբերի գրագիտությունը, տեղեկատվության բարդությունը, ֆիզիկական հասանելիությունը և ժամկետները:

**6.
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ
և ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Այս փուլը ներառում է տեղեկատվության հավաքագրումը միջամտության իրական ազդեցությունների վերաբերյալ և ստուգումը, թե արդյոք և որքանով են ՄԻԱԳ հանձնարարականները կատարվել միջամտության իրականացման ընթացքում: Այս փուլը նաև թույլ է տալիս նույնականացնել անսպասելի ազդեցությունները, եթե դրանք առաջանում են:

Ազդեցությունների և մեղմացման միջոցառումները նույնականացնելուն պես կարևոր է մշտադիտարկել այս միջոցառումների իրականացումը և գնահատել, թե արդյոք դրանք արդյունավետորեն են հասցեագրում ազդեցությունները: Մեղմացման միջոցառումների մշտադիտարկումը սովորաբար ՄԻԱԳ ազդեցության կառավարման պլանի անբաժանելի մասն է: Որպեսզի մշտադիտարկումն արդյունավետ լինի կարևոր է, որ պլանում հստակ նշվի թե ինչ պետք է մշտադիտարկվի, երբ, ում կողմից և ինչ հաճախականությամբ: Քանի որ մարդու իրավունքների իրավիճակը դինամիկ է, կարևոր է, որ միջամտության արդյունավետությունը և արդյունքները պարբերաբար գնահատվեն (յուրաքանչյուր 3-5 տարի համարվում է օպտիմալ՝ կախված միջամտության մասշտաբից և շրջանակից):

Սովորաբար միջամտության նախաձեռնողը նաև ստանձնում է մշտադիտարկումը, սակայն, ՄԻԱԳ վերլուծաբանները առաջակում են, որ ՄԻԱԳ գործընթացը կարող է մեծապես շահել մասնակցային մշտադիտարկման առկայության դեպքում՝ նկատի ունենալով այն, որ մեծ թվով շահառուներ, նախևառաջ միջամտության անմիջական ազդակիրները, կարող են ներգրավվել մշտադիտարկման մեջ: Եթե ճիշտ է նախագծված, մասնակցային մշտադիտարկումը կարող է օժանդակել հաշվետվողականության բարձրացմանը և վստահությունը ամրապնդել շահառուների տարբեր խմբերի միջև:

⁶ Մարդու իրավունքների դանիական ինստիտուտ /The Danish Institute for Human Rights/, 2016

7.

Խորհրդակցություն

Սա հրատապ միջսեկտորիալ հիմնահարց է, որը վերաբերվում է ՄԻԱԳ ամբողջ գործընթացին և կարող է կիրառվել վերոնշյալ փուլերից յուրաքանչյուրի դեպքում: Այս փուլի նպատակն է ապահովել, որ բոլոր համապատասխան շահառու խմբերը, հատկապես այն խմբերը, որոնք միջամտության ազդակիրներն են, հնարավորություն ունեն արտահայտել իրենց տեսակետները և իրենց կարծիքները հաշվի են առնվում ՄԻԱԳ գործընթացում:

Խորհրդակցությունը շահառու խմբերի հետ համարվում է ՄԻԱԳ գործընթացի միջուկը: Որոշ գիտնականներ նույնիսկ պնդում են, որ ՄԻԱԳ-ի հզորությունը մեծապես կախված է խորհրդատվական գործընթացի ամբողջականությունից⁷: Ելնելով մասնակցության և թափանցիկության մարդու իրավունքների սկզբունքների շեշտադրումից՝ ակնկալվում է, որ ՄԻԱԳ-ը ներառելու է մեծամասշտաբ խորհրդակցությունները գնահատման ամբողջ ընթացքում, մասնավորապես՝

- Նախնական գնահատման և գործունեության շրջանակի որոշման փուլերում անհրաժեշտ է նույնականացնել շահառուների համապատասխան խմբերին և հարցազրույց անցկացնել նրանց հետ հասկանելու իրավիճակը, առնչությունը միջամտության հետ և հզորության դինամիկան նրանց միջև: Որոշ խմբեր կամ անհատներ միգրացիոն դուրս մնան գործընթացի սկզբում, սակայն ՄԻԱԳ-ը պետք է բավականաչափ ճկուն լինի այսպիսի բացթողումը շտկելու համար հետագա փուլերում,
- Տվյալների հավաքագրման փուլում շահառուները նախնական տվյալների հիմնական աղբյուրներն են,
- Շահառուների հեռանկարները, մասնավորապես միջամտության ազդակիրներները, էական են ազդեցությունների նույնականացման և գնահատման, ինչպես նաև մեղմացման միջոցառումների նախագծման գործում,
- Միջամտության իրական ազդեցությունների մշտադիտարկման գործընթացում մասնակցությունը, ինչպես նշված է վերևում, կարող է օգնել միջամտության աջակիցներին վստահություն կառուցել շահառու խմբերի միջև:

⁷ Սկանդինավյան հավատարմագրային կառավարման հիմնադրամ, 2013

- Շահառու խմբերի համար, հատկապես [պոտենցիալ կերպով] ազդակիր խմբերի համար, մասնակցությունը ՄԻԱԳ գործընթացներում կարևոր է.
- Առավել լավ հասկանալու պլանավորված կամ առկա միջամտությունը, ինչպես նաև պոտենցիալ կամ իրական ազդեցությունները,
- Իմանալու իրենց իրավունքների և այլ կողմերի՝ տվյալ իրավունքները հարգելու համապատասխան պարտականությունների մասին,
- Ազդելու որոշումների կայացման գործընթացի վրա, որը ունի կամ կարող է ունենալ ազդեցություն նրանց կյանքի վրա:

Մեթոդաբանական տեսանկյունից, ՄԻԱԳ-ի այս յոթ փուլերը կարելի է հստակ տարբերակել, սակայն, պրակտիկայում այս փուլերը կարող են համընկնել և փոփոխվել՝ կախված գնահատման ենթակա միջամտության առնչվող գործոններից, որոնց թվում՝^{8,9,10}

Ա) Միջամտության բնույթը և չափը,

Բ) ՄԻԱԳ-ի պատվիրակող կազմակերպության տեսակը,

Գ) Գնահատման նպատակ(ներ)ը,

Դ) ՄԻԱԳ-ի ժամկետային կանոնակարգումը՝ նախնական թե փաստացի, երբ են նշանակալից փոփոխություններ ներդրվում կազմակերպության գործունեության մեջ (օրինակ՝ զարգացման նոր գործունեության պլանավորում, միաձուլում կամ ձեռք բերում, ընդլայնում, վերականգնում, շահագործումից դուրս բերում և փակում),

Ե) Արտաքին համատեքստը, որում պլանավորված է կամ գործում է միջամտությունը (ներառյալ տվյալ երկրի/տարածաշրջանի/տեղանքի հետ առնչվող մարդու իրավունքների հետ կապված ռիսկերը) և

Զ) Գնահատման համար հատկացված ռեսուրսները:

⁸ Սկանդինավյան հավատարմագրային կառավարման հիմնադրամ, 2013

⁹ Գոնզալես Ա. /Gonzalez A./, 2014.

¹⁰ ԳԱՄՖ և ՄՖԿ, 2010

ՄԻԱԳ-ի էական հատկանիշները

Չնայած ՄԻԱԳ պրակտիկայում առկա տարբերություններին, կան նաև 6 ընդհանուր հատկանիշներ, որոնք էական են ՄԻԱԳ-երի համար: Այս հատկանիշները առանձնացվում են ՄԻԱԳ գրականության մեջ և հակիրճ ներկայացված են ստորև՝

Աղյուսակ 2. ՄԻԱԳ-ի հիմնական հատկանիշները

1. Մարդու իրավունքների նորմատիվայի շրջանակ	ՄԻԱԳ-ը բացահայտորեն հիմնված է մարդու իրավունքների միջազգային շրջանակի վրա և ՄԻԱԳ հետազոտողները դիտարկում են այս հատկանիշը որպես այլ ազդեցությունների գնահատումից տարբերակող հատկանիշ: Սա նշանակում է, որ ՄԻԱԳ-ը պետք է չափի, թե որքանով է միջամտությունը համապատասխանում մարդու իրավունքներին և բովանդակության (գնահատվում է, թե արդյոք միջամտության հավանական արդյունքները կունենան դրական թե բացասական ազդեցություններ հիմնական մարդու իրավունքների նորմերի և չափանիշների վրա) և գործընթացի առումով (արդյոք գնահատման գործընթացն ինքնին մարդու իրավունքների մասին բողոք է):
2. Հավասարություն և խտրականություն չդրսևորում	Ազդեցությունների գնահատման այլ տեսակները սովորաբար փորձում են գնահատել միջամտությունների անհամաչափ ազդեցությունները տարբեր անձանց/խմբերի վրա: Սա հաճախ դիտարկվում է ընդհանուր կետ ՄԻԱԳ-ի հետ, որը նաև փորձում է որոշել, թե արդյոք հավակն է, որ միջամտությունը խտրականություն դրսևորող ազդեցություն կունենա մի խմբի վրա բնակչության շրջանակում: ՄԻԱԳ-ի դեպքում, հավասարության հիմնահարցը հիմնականում առնչվում է խտրականության չդրսևորման իրավունքին և հարակից հավասարության իրավունքներին: Միջամտությունները կարող են խտրականության ենթարկել տարբեր ձևերով, հետևաբար, ՄԻԱԳ-երը գնահատում են

	խտրականության և՛ ուղղակի, և՛ անուղղակի ձևերը:
3. Թափանցիկություն և տեղեկատվության հասանելիություն	<p>Թափանցիկությունը առնչվում է ՄԻԱԳ-ի երկու տարբեր ասպեկտների հետ: Առաջինը առնչվում է նրան, թե որքանով է գնահատման ենթակա միջամտությունը թափանցիկ, թե արդյոք իր բովանդակությունը և հավանական ազդեցությունները հրապարակվել են ճիշտ ժամանակին և բավականաչափ տվյալներով նախքան դրա հաստատումը: Թափանցիկության երկրորդ ասպեկտը առնչվում է ՄԻԱԳ գործընթացի վերաբերյալ տեղեկատվության բացահայտմանը, կիրառվող մեթոդաբանությանը և գնահատման արդյունքներին: Հենց ՄԻԱԳ-ի գործընթացի թափանցիկությունը էական է իրավունքների իրականացման ամբողջ գործընթացի ճշգրտությունը, անկախությունը և լեգիտիմությունը մշտադիտարկելու համար:</p> <p>Ընդհանուր առմամբ, ինչ վերաբերվում է թափանցիկությանը, չափանիշայինը գնահատումը հանրայնացնելն է, սակայն, պրակտիկայում միշտ չէ, որ այդպես է լինում, մասնավորապես երբ ՄԻԱԳ-երը իրականացնում են գործարար ընկերություններում (ի տարբերություն ՄԻԱԳ-երի, որոնք անցկացվում են պետական մարմինների կամ ՀԿ-ների կողմից, որոնք սովորաբար հանրայնացվում են օրենքով սահմանված պարտավորվածությունից ելնելով): Իդեալական տարբերակում, ՄԻԱԳ-ի գործընթացում թափանցիկությունը չպետք է սահմանափակվի միայն գնահատման հաշվետվությունների հրապարակայնացմամբ, այլ թափանցիկությունը պետք է արտացոլվի գնահատման գործընթացի բոլոր փուլերում, իսկ այս չափանիշից բացառությունները պետք է հստակ սահմանվեն և հիմնավորվեն:</p>
4. Հանրային մասնակցություն	<p>Հանրային մասնակցություն ՄԻԱԳ-ում մեկ այլ կարևոր հիմնահարց է: Ինչպես թափանցիկության դեպքում, հանրային մասնակցության սկզբունքն ունի երկու չափայնություն ՄԻԱԳ-ում՝ մի կողմից, ՄԻԱԳ-ը պետք է</p>

	<p>գնահատի, թե արդյոք տեղում առկա են արդյունավետ մասնակցային մեխանիզմներ միջամտության ամբողջ գործողության ընթացքում (ձևակերպումից մինչև գնահատում), իսկ մյուս կողմից, այն պետք է ապահովի նման մեխանիզմների ինտեգրումը ՄԻԱԳ-ի բուն գործընթացում:</p>
<p>5. Հաշվետվողականություն</p>	<p>Հաշվետվողականությունը առնչվում է մարդու իրավունքների շրջանակի իրավական բնույթին: ՄԻԱԳ համատեքստում հաշվետվողականության խթանումը նշանակում է, որ ՄԻԱԳ-ը պետք է ներառի բողոքման արդյունավետ մեխանիզմներ (բացի դատարաններ դիմելուց կամ պաշտոնական իրավական համակարգից), եթե մարդու իրավունքները չեն հարգվում: Բողոքման համակարգը համարվում է արդյունավետ, երբ այն համաչափ է, մշակութային առումով տեղին, հասանելի, թափանցիկ և առաջարկում է պաշտպանություն: Նման մեխանիզմները կարող են ապահովել, որ խախտվումը շտկվում է և որ պատասխանատուները պատասխանատվության են ենթարկվում: Բացի բողոքման մեխանիզմից, ՄԻԱԳ-ում հաշվետվողականությունը նշանակում է, որ պարտականություն ունեցողները պետք է մշտադիտարկեն, եթե ՄԻԱԳ-ը որևէ փոփոխությունների է բերել իրենց գործողություններում/գործառնություններում և հաշվետու լինեն, թե որքանով են իրականացրել մարդու իրավունքների պարտականությունները:</p>
<p>6. Միջսեկտորիալ մոտեցու և միջազգային քաղաքականության կապակցվածություն</p>	<p>Մարդու իրավունքները՝ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, անբաժանելի են, փոխկապակցված: Դա նշանակում է, որ դժվար է և շատ դեպքերում անհնար է իրականացնել մարդու որևէ իրավունք մեկուսացման մեջ, մեկ իրավունքի պաշտպանությունը հեշտացնում է այլ իրավունքների պաշտպանությունը, իսկ մեկ իրավունքից զրկվելը կարող է բացասաբար ազդել այլ</p>

	<p>իրավունքներից օգտվելու գործընթացի վրա: Ավելին, ՄԻԱԳ-ը նաև չափում է միջամտության գումարային ազդեցությունները, քանի որ տարբեր ազդեցությունների համակցումը կարող է հանգեցնել մարդու իրավունքների լրացուցիչ խախտումների կամ ինտենսիվության փոփոխման կամ խախտումների չափին:</p> <p>ՄԻԱԳ-ը կարևոր գործիք է խթանելու միջազգային քաղաքականության կապակցվածությանը: ՄԻԱԳ-ը կարող է ապահովել որ, (ա) միջազգային քաղաքականության պարտականությունները աղյուսավետորեն իրականացվում են ազգային օրենքների, քաղաքականությունների և գործընթացների միջոցով (ուղղահայաց կապակցվածություն) և (բ) ազգային քաղաքականությունները և միջամտությունները ոլորտներով և պետական մարմինները համապատասխանում են կամ համատեղելի են իրար հետ, և առնվազն չեն վտանգում մարդու իրավունքները (հորիզոնական կապակցվածություն):</p>
--	--

Աղբյուրներ՝ Սկանդինավյան հավատարմագրային կառավարման հիմնադրամ, 2013, Գոնզալես Ա. /Gonzalez A./, 2014.

Համայնքային հենքով ՄԻԱԳ-ի անցկացումը՝ հաջողության խորհուրդներ

Տարբեր մարմինների կողմից անցկացված ՄԻԱԳ-ի տարբեր տեսակների շրջանակում կցանկանանք ուշադրությունը կենտրոնացնել համայնքային հենքով ՄԻԱԳ-ի վրա, որը կարող է կարևոր գործիք լինել համայնքների և ՔՀԿ-երի համար իրենց աշխատանքում՝ ուղղված անկայուն ներդրումների դեմ: Արդյունավետ հենքով ՄԻԱԳ-ը արձագանքում է համայնքի կամ համայնքների արտահայտված պահանջներին կամ նպատակներին, որը ազդեցության է ենթարկվել մասնավոր ներդրման/հանրային ներդրման պատճառով:

Նախապայմանն այն է, որ համայնքները պետք է ներառված լինեն գնահատման բոլոր ասպեկտներում՝ սկսած նպատակների սահմանումից մինչև տվյալների

հավաքագրում և վերլուծություն, ինչպես նաև որոշելիս, թե ինչպես հաշվետվության արդյունքները պետք է գործածվեն: Հետևաբար, ՄԻԱԳ-ը կարողությունների զարգացմանն ուղղված առաջադրանք է և սոցիալական գործընթաց, որը հզորացնում է համայնքներին հայտնելու և պնդելու իրենց իրավունքների մասին և հաղորդակցվել ընկերությունների (երբ անհրաժեշտ է) հետ իմաստավից տարբերակով:

ՄԻԱԳ-ը իրականացնելու համար սոցիալական և քաղաքական համատեքստը պետք է հնարավորիս բարենպաստ լինի: Ժամանակի ռազմավարական կարգավորումը կարող է հնարավորություններ ստեղծել առավել արդյունավետ ազդել որոշումների կայացման գործընթացի վրա և ունենալ շոշափելի արդյունքներ, օրինակ՝ ընտրություններից առաջ, երբ կանխատեսվում են ինստիտուցիոնալ փոփոխություններ կամ ավարտին են հասցրվում ներդրումային նախագծերը որոշումների կայացման համապատասխան գործընթացում: Այս դեպքում ՄԻԱԳ-ը կարող է համալրել ընթացիկ արշավները կամ գործողությունները՝ առաջ տանելով համայնքների և նրանց աջակցող կազմակերպությունների շահերը՝ դրանք կրկնօրինակելու կամ դրանց հակառակ ուղղությամբ աշխատելու ընթացիկ ջանքերին:

Որոշակի դեպքերում, ՄԻԱԳ-ի իրականացումը կարող է հակաարդյունավետ լինել: Անբարենպաստ մեկնարկային կետը, երբ ՄԻԱԳ-ը չի դիտարկվում որպես համապատասխան և արդյունավետ գործիք, լինում է երբ.

- Համայնքը չի համաձայնվում ՄԻԱԳ-ի իրականացմանը:
- Հետազոտական թիմի կամ համայնքի անվտանգությունն առավել մեծ ռիսկի է դրվում, որը կարող է հատկապես ճշմարիտ լինել կոնֆլիկտային տարածքների դեպքում:
- Չկան նույնականացվող հնարավորությունների բավարար սվյալների հավաքագրման համար:
- Գնահատումը չէր լինի տեղական շահերի պաշտպանության ամենաարդյունավետ միջոցը: Եթե, օրինակ, համայնքը դեմ է նախագծին, որը ոչ մի հաստատում հիմքեր չունի, ռեսուրսների առավել արդյունավետ կիրառում կարող է լինել լոբինգը կամ արշավի կազմակերպումը նախաձեռնության դեմ և ոչ թե ՄԻԱԳ-ի անցկացումը:

Իդեալական տարբերակով, ՄԻԱԳ-ը կարող է իրականացվել նախքան մասնավոր ներդրումային նախագծի մեկնարկը (նախնական) և կարող է լինել ընթացիկ: Այս վաղ փուլում, ՄԻԱԳ-ն ունի որոշումների կայացման վրա ազդելու և իրավունքների պոտենցիալ խախտումները կանխելու ամենամեծ հնարավորությունը, բայց ՄԻԱԳ-ը

պետք է ձգտի լինել կանխագրիչ և կանխարգելիչ, և ոչ թե հակադարձ ու մեղմացուցիչ: Փաստացի գնահատումը կարող է օգնել շրջանակել հանձնարարականները կառավարությունների համար պոտենցիալ կերպով առանձնացնելով ցանկացած թուլություն ինստիտուցիոնալ մեխանիզմների մեջ՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանությունը, միևնույն ժամանակ խթանելով ազդակիր համայնքների առավել լայն և արդյունավետ մասնակցությունը ընկերության կամ ընկերությունների հետ: ՄԻԱԳ-ը, ներդրումային ծրագրի ընթացքում, շեշտադրում է իրավիճակի շտկումը և ոչ թե կանխումը: Գործի ուսումնասիրությունը, երբ ներդրումային նախագիծն արդեն իսկ ընթացքի մեջ (փաստացի) կարող է առավել հեշտ լինել տեղեկատվության հասանելիության և տվյալների հավաքագրման հնարավորությունների առումով, բայց այն չի լինի այդքան կանխագրիչ և պետք է նախապես կենտրոնանա շտկման վրա: Մի շարք գործոններ ազդում են ՄԻԱԳ-ի իրականացման վրա:

Համայնքային հենքով ՄԻԱԳ իրականացում

Հետազոտական թիմի համար ստորև բերված են ամենակարևոր հանձնարարականները, որոնք պետք է հաշվի առնել գնահատում իրականացնելիս՝

- Հավաստիանալ, որ համայնքները գնահատման համար տվյալների առաջնային աղբյուր են: Ապահովել այն, որ ՄԻԱԳ-ի իսկապես հիմնված է համայնքի վրա, որը պետք է սկսվի տեղական համայնքների տեսակետներից:
- Հանդիպել բոլոր շահառուների հետ՝ վստահելիությունն ապահովելու նպատակով: Հավաստիությունը և վերլուծական ճշգրտությունը էական են հաջող գնահատման համար: Հրապարակվելուն պես ՄԻԱԳ հաշվետվությունները կարող են ենթարկվել տարբեր քննադատությունների՝ հաճախ թիրախավորելով արդյունքների հավաստիությունը: Ոչ անհրաժեշտ քննադատությունիս խուսափելու համար, հաշվետվությունը պետք է ներառի բոլոր հնարավոր ապացույցները, և տվյալների առումով, և շահառուների վկայությունների առումով:
- Նայել ընկերության գործունեության և՛ դրական, և՛ բացասական ազդեցությունների վրա մարդու իրավունքների տեսանկյունից՝ ներառելով մեծ թվով շահառուների տվյալներ: Գնահատումը պետք է լինի համապարփակ, որպեսզի չազդի հաշվետվության արժանահավատության վրա:
- Ներդրումների պոտենցիալ և իրական ազդեցությունների գենդերային չափայնությունը պետք է շեշտադրվի: Մասնավոր ներդրումային սխեմաների ազդեցությունները հաճախ տարբեր կերպ են ազդում տղամարդկանց և կանանց մարդու իրավունքների վրա: Տվյալների հավաքագրումը և վերլուծությունը պետք է հաշվի առնեն այս տարբերությունները: Մի դեպքում, օրինակ,

ուսումնասիրությունները բացահայտել են կրծքի կաթում և նորածին երեխաների պորտալարային հանգույցում առկա կապարի հետքերը՝ նշանակելով, որ կապարի նստվածքը կապարի հանքից բացասաբար է ազդում շրջապատող համայնքների կանանց վերարտադրողական ունակությունների վրա:

- Լինել թափանցիկ գործընթացի և արդյունքների առումով և տրամադրել տեղական համայնքներին ընդհանուր տեղեկատվություն ՄԻԱԳ-ի նպատակների, մեթոդաբանության և գնահատման գործընթացի մասին: Թիմը պարտավոր է նաև տարածել ավարտական հաշվետվությունը և տրամադրել տվյալները այնպես, որ ռիսկի չենթարկվեն համայնքները կամ ուրիշները:

- Վավերացնել հաշվետվությունում առկա տվյալները, մասնավորապես անձնական վկայությունները, որին կարելի է հասնել եռակի ստուգելով վկայությունները՝ համեմատելով դրանք երկրորդական և երրորդական աղբյուրների հետ և/կամ վավերացնելով վկայությունները արտաքին փորձագետների կողմից: Վկայությունները կարող են նաև համեմատվել և վավերացվել առկա հետազոտության միջոցով, ինչպիսիք են հրատարակված հաշվետվությունները, ակադեմիական գրականությունը, գիտական հոդվածները և/կամ այլ վերագրված աղբյուրներ,

- Ճշտել տվյալների աղբյուրների արժանահավատությունը՝ փնտրելով անկողմնակալ և անկախ ռեսուրսներ: Օրինակ՝ համալսարանական գիտահետազոտական կենտրոնի կողմից հանքարդյունաբերական ընկերության մասին տրամարդված տեղեկատվությունը առավել վստահելի է քան հայտնի հակահանքարդյունաբերական խմբի տրամադրած տեղեկատվությունը:

Ինչպես ներգրավել համայնքի փորձառությունները ՄԻԱԳ-ում

Համայնքային հենքով ՄԻԱԳ-ի առավելությունը այն է, որ այն տալիս է մասնավոր ներդրումների մարդու իրավունքների վրա ազդեցությունների գնահատումը համայնքի տեսանկյունից և ոչ թե ընկերության և/կամ պետության տեսանկյունից.

- Հետևանք, ճշգրտությունը համայնքի տեսակետի հետ ավելագույն կարևոր է, քանի որ այն աջակցում և ներգրավում է համայնքի հիմնական անդամներին և օգնում է ստեղծել դաշինքներ տեղի առաջնորդների հետ և փնտրել տեղի փորձագետներ ուսումնասիրությունում ներգրավելու համար: Դա օգնում է զարգացնել առավել ամուր հարաբերություններ թիմի և համայնքի միջև՝ միևնույն ժամանակ թույլ տալով մշտական հաղորդակցություն և տեղեկատվության տարածում:
- Հետազոտողները և համայնքը պետք է ունենան ընդհանուր ակնկալիքներ և նպատակներ գնահատման համար, որպես պրոդուկտ: Արդյո՞ք ՄԻԱԳ

հաշվետվությունը ցանկալի արդյունք է: Կամ արդյո՞ք համայնքը և հետազոտական թիմը ցանկացում են գործընթացն ինքնին օգտագործել որպես գործիք մարդու իրավունքների մասին գիտելիքի աճի համար համայնքի անդամների և այլ շահառուների շրջանակում: Արդյո՞ք ՄԻԱԳ-ը օգտագործվելու է բարձրացնել հանրային իրազեկվածությունը կամ ազդելու ներպետական կամ միջազգային օրենքների մասին: Կամ արդյո՞ք նպատակն է համոզել ընկերությանը փոփոխել նախագիծը կամ ներդրումի անփութության սխալը:

Ընդհանուր նպատակների հստակ հավաքածուն կարևոր է.

- Կառավարել ակնկալիքները. ՄԻԱԳ-ը կարող է ազդել նախագծի դինամիկայի վրա համայնքի ներսում, ինչպես նաև կարող է բարձրացնել ակնկալիքները ՄԻԱԳ հաշվետվության պոտենցիալ ազդեցության առումով: Հիասթափությունից խուսափելու նպատակով հետազոտական թիմը պետք է կառավարի այս ակնկալիքները՝ հոգ տանելով սահմանել իրատեսական և պոտենցիալ առումով հասանելի նպատակներ:
- Նույնականացնել ամենակարևոր մտահոգությունները մարդու իրավունքների առումով. մասնավոր ներդրումը կարող է ներառել մի շարք մարդու իրավունքներ և միգրացե հնարավոր չլինի փաստաթղթավորել դրանց բոլորի ազդեցությունները: Կարևոր է ներկայացնել մարդու իրավունքների խախտումները, որոնք ամենաշատն են մտահոգում համայնքին, քան այլ շահագրգռված խմբերինը կամ շահառուներինը:
- Ունակ լինել ադապտացնել մարդու իրավունքների լեզուն տեղական իրողությունների հետ: Համայնքը միգրացե հեշտությամբ չհասկանա կամ կիրառի մարդու իրավունքների տեխնիկական լեզուն իրենց կոնկրետ համատեքստում: Հետազոտական թիմը պետք է փնտրի ուղիներ մարդու իրավունքների եզրութաբանությունը և գաղափարները բացատրելու համար, որպեսզի նրանց համար հասկանալի լինի համայնքի ամենօրյա, պրակտիկ իրողությունների առումով: Ավելին, երբ հետազոտական թիմերը և համայնքները խոսում են տարբեր լեզուներով, թիմերը պետք է տրամադրեն բանավոր և/կամ գրավոր թարգմանություն գնահատման բոլոր փուլերում: Թիմերը կարող են նաև մշակել և էքսպերիմենտներ կատարել տարբեր մանկավարժական հնարքների և միջավայրերի հետ, ինչպիսիք են տեսողական հնարքները կամ մասնակցային վարժությունները, որոնք կոնկրետ մշակվել են համայնքի տեսակետը ներգրավելու համար: Որպես այդպիսին, համայնքի տեսակետի պատկերման ճշգրտությունը չափազանց կարևոր է:

Այլ շահառուների ներգրավում

Այլ շահառուների հետ ներգրավման միջոցով ՄԻԱԳ գործընթացը ձգտում է մեծացնել հաղորդակցությունը և արդյունավետ լուծումների վրա հիմնված երկխոսությունը ազդակիր համայնքների և այլ շահառուների միջև: Կարող են լինել իրավիճակներ, երբ ընկերության կամ կառավարության մասնակցությունը հնարավոր չէ, բայց ներգրավման դեպքում կան մի քանի գործոններ, որոնք անհրաժեշտ է հիշել, երբ հետազոտական թիմը կարողանա ներգրավել այս դերակատարների հետ:

Ընկերության հետ ներգրավելիս՝

- Ծանոթանալ ընկերության կառուցվածքի հետ՝ նույնականացնելու հնարավոր լծակները՝ ներառյալ տնօրենների խորհուրդը և/կամ բաժնետերերը: Եթե ընկերության ղեկավարությունը չի կամենում տեղեկատվություն տրամադրել, բաժնետերերը կամ կորպորատիվ վերահսկողության այլ մարմինները միգուցե առավել աջակից լինեն,
- Ստեղծել ապահով տարածքներ, որտեղ կարելի է հարցազրույց անցկացնել աշխատողների հետ: Ինչպես համայնքի անդամները, այնպես էլ ընկերության աշխատակիցները կարող են տատանվել մասնակցել ՄԻԱԳ-ին՝ վախենալով բացասական հետևանքներից, ինչպես օրինակ՝ աշխատանքի կորուստը, սպառնալիքը կամ մի շարք այլ հավանական դժվարություններ:
- Ընդհանուր լեզու գտնել ընկերությունների հետ շփվելիս. մարդու իրավունքների խախտումների մասին հայտարարությունները կարող են առավել մեծ կշիռ ունենալ, քան շահույթի արդյունավետության մասին գրված վերլուծությունները: Օրինակ՝ երբ ընկերության՝ համայնքի ջուր ունենալու իրավունքը հարգելու իրավական պարտավորության մասին փաստարկը կարող է ստիպել ընկերությանը կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկել, առավել համոզիչ կարող է լինել այն վերլուծությունը, թե որքան գումար ընկերությունը միգուցե ծախսի, եթե իր գործունեությունը աղտոտի տեղի ջրերը կամ սպառնա հարակից համայնքների բնակիչների առողջությանը:

Կառավարությունների հետ ներգրավելիս (ընկերության արտաքին և ներքին կառավարություններ)

- Ունենալ հստակ հասկացողություն կառավարությունների և ընկերության միջև առկա հարաբերությունների մասին: Ավելի հաճախ կառավարությունները հետաքրքրված են ներգրավել օտարերկրյա և/կամ մասնավոր ներդրումներ: Հասկանալով կառավարության փոխհարաբերությունները ներդրող ընկերության

հետ կարող է հնարավորություն տալ հետազոտական թիմին ենթադրություններ անել երկու դերակատարների վարքագծի մասին:

- Ընդգծել ՄԻԱԳ-ի գործընթացի գիտելիքների կառուցման ասպեկտը. երբեմն կառավարության պաշտոնյաները կարող են հերքել կառավարության պատասխանատվությունը մարդու իրավունքների խախտումները պայմանավորված ընկերության գործողություններով: ՄԻԱԳ գործընթացը կարող է որպես հնարավորություն ծառայել կառուցել կառավարության կարողությունները մարդու իրավունքների օրենքների շուրջ և պարտականություն կրողների և իրավատերերի պատասխանատվությունը այս օրենքների համաձայն:

Լավ շարադրված համայնքային ՄԻԱԳ հաշվետվությունը՝

- Հիմնված է գիտական օբյեկտիվության վրա՝ խուսափելու կողմնակալության մեղադրանքներից: Վերլուծությունը արտացոլում է ապացույցների վրա հիմնված վերլուծություն և հանձնարարականներ:

- Հավաստանում են, որ ազդակիր համայնքները ներդրում ունեն առաջարկվող բովանդակությանը և ՄԻԱԳ-ի հիմնական եզրակացությունները և հետազոտողության գործընթացի և հաշվետվության բովանդակություն առաջնային սեփականատերերն են: Որպես այդպիսին, նրանք պետք է իրենց մեկնաբանությունները տան հաշվետվությանը նախքան դրա հրապարակումը կամ տարածումը:

- Երրորդ կողմին խնդրել մեկնաբանություններ տալ հաշվետվությանը նախքան դրա հրապարակումը: Նման մեկնաբանությունները կարող են բերել կարևոր բարելավման և փոփոխությունների հաշվետվությանը:

Ինչն է ստեղծում հաջողված ՄԻԱԳ -ը

Գլոբալ ուսումնառության ընթացքում ծագած բազմաթիվ դասերի շարքում, ամենակարևորը այս հատկանիշների հստակ արտահայտումն է և հաջողության կարևոր գործոնները իդեալական ՄԻԱԳ գործընթացում՝

- Արձագանքում է համայնքների շահերին,
- Անցկացվում է վաղ փուլում և շարունակական է,
- Ունի հստակ նպատակներ,
- Արժանահավատ է, համապարփակ և անկախ,

- Հիմնված է գենդերային տեսանկյան և վերլուծության վրա,
- Թափանցիկ է, մասնակցային, ներառական և հզորացնում է տեղային մակարդակով,
- Տալիս է կոնկրետ և գործողությունների հանգեցնող հանձնարարականներ,
- Ակտիվորեն օգտագործվում է համայնքների կողմից՝ խթանելու պետությունների և ընկերությունների հաշվետվողականությունը:

Օգտակար տեղեկատվություն համայնքային հենքով ՄԻԱԳ մեթոդաբանության մասին՝

Ընդհանուր հոդված համայնքային հենքով ՄԻԱԳ մեթոդաբանության մասին <https://www.fidh.org/en/issues/globalisation-human-rights/business-and-humanrights/community-based-human-rights-impact-assessments>

- Համայնքային հենքով մարդու իրավունքների վրա ազդեցությունների գնահատում: Ճիշտ գործիքի ընտրություն, վերապատրաստման ձեռնարկ (COBRIA) մշակված Oxfam-ի և FIDH-ի կողմից. www.fidh.org/article19490

- Առցանց գործիք. <http://hria.equalit.ie/en/>

- Համայնքային հենքով մարդու իրավունքների վրա ազդեցությունների գնահատում: պրակտիկ դասերի հաշվետվությունը միջազգային հանդիպումից, Կանադա, 2010. մարդու իրավունքների վրա ազդեցությունների գնահատման անցկացման լավագույն պրակտիկան՝ օգտագործելով Ճիշտ գործիքի ընտրություն մեթոդաբանությունը <https://www.oxfamamerica.org/static/oa3/files/community-based-human-rightsimpact-assessments-practical-lessons.pdf>

FIDH-ը (Համաշխարհային շարժում հանուն մարդու իրավունքների) ակտիվորեն խթանում է համայնքային հենքով ՄԻԱԳ-ը և հայտարարում է մրցույթ ՔԿՀ-երի և համայնքների համար՝ ՄԻԱԳ-ի անցկացման համար (<https://www.fidh.org>)

FIDH-ի կողմից անցկացված ՄԻԱԳ-ի օրինակներ.

- Հարավային Աֆրիկա. Բլուվուրուցիլստ հանքարդյունաբերական գյուղ. պետական և կորպորատիվ պատասխանատվության հրաժարման մարդկային գինը
Հաշվետվությունը՝ <https://www.fidh.org/IMG/pdf/rapafriquesud687abassdef.pdf>
Հակիրճ ամփոփումը՝
<https://www.fidh.org/IMG/pdf/afriquesudresumeexecut687abassdef.pdf>

- Հոնդուրաս. վտանգված ԲՀՊՏ-ներ և ջրի աղբյուրներ, ՀԷԿ-ի պատվարի կառուցման դեպքը Սան Ֆրանցիսկոյում, Աթլանթիդա հաշվետվություն.
<https://www.fidh.org/IMG/pdf/hria691hondurasangweb.pdf>
Հակիրճ ամփոփումը՝ <https://www.fidh.org/IMG/pdf/hria691hondurasresumexecuangbassdef.pdf>
- Կոլումբիա. նավթի մարդկային արժեքը, մարդու իրավունքների վրա ազդեցությունների գնահատումը «Pacific Exploration and Production Corp.» ընկերության գործունեության ժամանակ
Հաշվետվությունը՝ https://www.fidh.org/IMG/pdf/colombie_informe_es_version_web.pdf
Հակիրճ ամփոփումը՝ https://www.fidh.org/IMG/pdf/colombia_executive_summary.pdf
- Բրազիլիա. ի՞նչ արժեն մարդու իրավունքները Բրազիլիայի հանքարդյունաբերության և պողպատի արդյունաբերության ոլորտում
Հաշվետվությունը՝ https://www.fidh.org/IMG/pdf/report_brazil_2012_english.pdf
Հակիրճ ամփոփումը՝ https://www.fidh.org/IMG/pdf/resume_Bresil_UK-LD2-2.pdf
- Էկվադոր. լայնամասշտաբ հանքարդյունաբերությունը Էկվադորում և մարդու իրավունքների չարաշահումները, «Corriente Ressources Inc.» ընկերության գործը
Հակիրճ ամփոփումը՝ https://www.fidh.org/IMG/pdf/Exec_Summary_Largescale_Mining_Human_Rights_Ecuador-LD.pdf

Օգտագործված գրականության ցանկ

<https://www.oxfamamerica.org/static/oa3/files/community-based-human-rights-impact-assessments-practical-lessons.pdf>

Մարդու իրավունքների վրա ազդեցության գնահատումները ո՞րպես զարգացման քաղաքականության նոր գործիք

Human Rights Impact Assessments as a New Tool for Development Policy?
https://www.oefse.at/fileadmin/content/Downloads/Publikationen/Workingpaper/WP37_Human_Rights.pdf

Մարդու իրավունքների վրա ազդեցության գնահատումների ուսումնասիրություն
Human Rights Impact Assessments

http://siteresources.worldbank.org/PROJECTS/Resources/40940-1331068268558/HRIA_Web.pdf